ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Պ Ա Ր Ո Յ Ր Հ Ա Յ Ր Ի Կ Ե Ա Ն Ի

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՀԵՆՔԸ

Արձանագրելով այն իրողութիւնը, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահն ունի ՀՀ Սահմանադրութեամբ եւ օրենքներով ամրագրուած որոշակի լիազորութիւններ եւ իրաւասութիւններ եւ պետական համակարգում նոյնիսկ այդպիսի բարձր դիրքի պայմաններումում կարող է որեւէ ծրագիր կեանքի կոչել միայն խորհրդարանի աջակցութեամբ

Յիշեցնելով ռազմավարական ծրագրերին նախապատութիւն տալու իմ ելակետային մոտեցման մասին

Առաջնորդուելով ծրագրային հիմնադրոյթները նախագահական ընտրութիւնների ընթացքում ՀՀ քաղաքացիներին պարզ ու հստակ, սեղմ սակայն հանրամատչելի կերպով ներկայացնեու հրամայականով

Հայ ժողովրդի ուշադրութեանն եմ ներկայացնում իմ գաղափարակիցների եւ աջակիցների մասնակցութեամբ պատրաստուած այս նախընտրական ծրագրահենքը:

1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ

ՀՀ սահմանադրութիւնը եւ միջազգայնօրէն այս ոլորտում Հայաստանի ստանձնած պարտաւորութիւնների ճշգրիտ կատարումը բաւական են, որպէսզի լիարժեքօրէն ապահովուած լինեն Հայաստանի քաղաքացու սոցիալական, քաղաքական, քաղաքացիական եւ միւս իրաւունքները: Հետեւութիւնն այն է, որ Հայաստանում պակասում է իշխանութիւնների քաղաքական կամքը: Մինչդեռ ներկայ օրէնսդրական դաշտի պայմաններում քաղաքական կամքի հետեւողական դրսեւորմամբ կարելի է բարելաւել՝

թէ աղքատութեան ճիրաններում յայտնուած,

թէ տասնամեակներ աղետի գոտում կացարանի սպասող,

թէ գործարար ոլորտում ոմանց արտոնեալ վիճակով մրցակցային անհաւասար պայմաններում գտնուող,

թէ դատական համակարգում խնդիրներ ունեցող,

թէ առողջապահական համակարգից հիասթափուած,

թէ իշխանաւորների անտարբերութիւնից հոգնած,

թէ ուժային կառոյցներում հանդիպող արատաւոր դրսեւորումներից դառնացաած եւ այլ անարդարութիւնների հանդիպած ու օտար ափերում փրկութիւն փնտրող քաղաքացիների վիճակը:

Մեզ համար մարդու իրաւունքներից կարեւորագոյնը եղել է ու մնում է նրա ինքնորոշման՝ որոշում ընդունելու (համոզմունք), այն արտայայտելու (խօսքի ազատութիւն) եւ իրագործելու իրաւունքը, առանց որի (որոնց) առկայութեան անէանում են միւս բոլոր իրաւունքները: Մարդկային հաւաքականութեան՝ ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրականացման գործիքը ժողովրդավարութիւնն է:

2. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Հայ ժողովրդի անյաջողութիւնների հիմնական պատճառն այն է, որ երկար դարեր նրա ճակատագիրը իր փոխարեն տնօրինել են կամ օտար նուաճողներն ու նրանց տեղական կամակատարները կամ էլ՝ պետականութեան վերականգնումից յետոյ՝ այս կամ այն կերպ պետական իշխանական լծակներին տիրացած մարդիկ:

Ժողովրդավարական մշակոյթ եւ աւանդոյթներ ունեցող ժողովուրդների համար առաջնային նշանակութիւն չունեն ընտրական իրաւունքի հարցում իրենց երկրների օրէնսդրութեան մէջ առկայ թերացումները: Հայ ժողովրդի թշնամիների հետեւողական ջանքերի հետեւանքով մենք այսօր չունենք քաղաքական՝ այդ թւում նաեւ ժողովրդավարական աւանդոյթներ եւ մշակոյթ: Դրան կարող է փոխարինել կատերեալ օրէնսդրութեամբ համամարդկային փորձառութիւնը ընդգրկող ժողովրդավարական համակարգի ընդունումը:

Նախագահի պաշտոնի ստանձնումից յետոյ սկսուելու են սահմանադրական բարեփոխումների աշխատանքները: Մի քանի ամսից մէկ տարուա ընթացքում աւարտին կհասցուեն նախագծի քննարկումները եւ եւս ամենաուշը մէկ տարուա ընթացքում կիրականացուի Սահմանադրութեան բարեփոխման հանրաքուէ: Դրան կյաջորդի ընտրական օրէնսդրութեան համապատասխանեցումը բարեփոխուած սահմանադրութեանը, Սահմանադրութեան անցումային դրոյթների հիման վրա Ազգային Ժողովը կդադարեցնի իր գործունէութիւնը, կկազմակերպուեն Ազգային Ժողովի եւ վարչապետի նոր ընտրութիւններ, որից յետոյ հրաժարական կտայ նաեւ նախագահը:

Սահմանադրութեան մէջ կամրագրուի ընտրողների ձայների տաս տոկոսի ստորագրութեամբ հանրաքուէ կազմակերպելու իրաւունքը, նոր սահմանադրութիւն ընդունելու նպատակով Սահմանադիր ժողով հրաւիրելու կարգը, կլուծարուի նախագահի հաստատութիւնը, ՀՀ վարչապետը (փոխվարչապետի հետ) կդառնա ընտրովի երեքամեայ պարբերականութեամբ, Ազգային ժողովի պատգամաւորների թիւը կկրճատուի հասնելով 81-ի, ԱԺ ընտրութիւնները կիրականացուեն երկու կամ երեք տարին մէկ՝ աւելացնելով (կրկնապատկելով) ժողովրդի մասնակցութիւնը՝ (ժողովրդավարութիւնը): Կաւելացուի նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւնների հաճախականութիւնը: Խորհրդարանի հայեցողութեամբ կընտրուի ա)բազմամանդատ մեծամասնական կամ բ) վարկանիշային համամասնական (առանց արգելանքի տոկոսի) ընտրակարգերից մէկն ու մէկը: Երկու դէպքում էլ ընտրութեանը մասնակցած ոչ մի քաղաքացու ձայն դուրս չի մնայ խորհրդարանից:

Բազմամանդատ ընտրական համակարգ որդեգրելու դէպքում Հայաստանը կբաժանուի 27 բնակչութեամբ գրեթէ իրար հաւասար ընտրատարածքների: Իւրաքանչիւրից կընտրուեն անհատապէս կամ ընտրական միաւորների միջոցով առաջադրուած եւ առաջին երեք տեղերը գրաւած թեկնածուները: Միւս թեկնածուներն իրաւունք կունենան ընտրութիւնների արդիւնքների ազդարարումից յետոյ մէկ շաբաթուա ընթացքում իրենց ստացած քուէները վերահաստատագրել իրենց համար նախընտրելի ընտրուած թեկնածուներից որեւէ մէկին: Խորհրդարանական քուէարկութիւնների ժամանակ խորհրդարանականները

քուէարկում են ոչ թէ մէկական պատգամաւորական ձայնով, այլ իւրաքանչիւրն իր ստացած քուէների քանակութեամբ: Արդիւնքում իւրաքանչիւր խորհրդարանական քուէարկութիւն վեր է ածւում միջնորդաւորուած հանրաքուէի, որտեղ շատ կարեւոր դեր է վերապահւում ոչ թէ պատգամաւորներին այլ քաղաքացիներին:

Վարկանիշային համամասնական ընտրակարգ որդեգրելու դէպքում Հայաստանը կունենայ մէկ ընտրատարածք, որում ընտրութիւններին մասնակցող ընտրական միաւորներում ընդգրկուած թեկնածուների հերթականութիւնը վերջնականապէս որոշւում է քաղաքացիների քուէարկութեան արդիւնքում: Ընտարական միաւորի ցուցակում հերթականութիւնը կսահմանուի ըստ ստացած քուէների: Խորհրդարան չանցած թեկնածուներն իրաւունք կունենան ընտրութիւնների արդիւնքների ազդարարումից յետոյ մէկ շաբաթուա ընթացքում իրենց ստացած քուէները վերահասցէագրել իրենց համար նախընտրելի ընտրուած թեկնածուներից որեւէ մէկին:

Սահմանադրութեան մէջ կամրագրուի ոչ միայն գործադիր իշխանութեան ղեկավարի՝ վարչապետի (եւ փոխվարչապետի), այլեւ ժողովրդի բարձրագոյն ներկայացուցչական մարմնի ընտրութեան (ձեւաւորման) կարգը: Երկրորդ ատեանի դատաւորների ընտրովիութեան կարգով ժողովրդավարութիւնը կներթափանցի նաեւ դատական համակարգ, որը կնպաստի դատարանների անկախութեան կայացմանը:

Այսորակ փոփոխութիւնների արդիւնքում Հայաստանն իր ժողովրդավարական համակարգով կդառնայ աշխարհի ամենաժողովրդավարական պետութիւնը: Դա ոչ միայն նկատելիօրէն կբարձրացնի Հայաստանի միջազգային վարկը, այլեւ հայ մարդուն կվերադարձնի պետութեան՝ քաղաքական կեանքի տիրոջ զգացողութիւնը:

3. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի արտաքին քաղաքականութեան ռազմավարական կողմնորոշիչը 1915-23 թուականների հայութեան նկատմամբ իրականացուած ցեղասպանութեան հետեւանքների վերացումն է (կամ նուազեցումը): Մարդկութեան դէմ գործուած այդ ծանր յանցագործութիւնը եզրափակուեց միջազգային իրաւունքին հակասող, առ այսօր գործող ռուս-թուրքական (լենին-աթաթուրք) պայմանագրով, որի հրապարակային դատապարտումն ու չեղեալ յայտարարումը Հայաստանի արտաքին քաղաքականութեան հրամայականներից է: Այդ պայմանագրով Հայաստանի միջազգայնօրէն ճանաչուած տարածքների 80%-ը բոլշեւիկեան Ռուսաստանի աջակցութեամբ գտնուում է Թուրքիայի եւ Ադրբեջանի տրամադրութեան տակ: Այս իրողութեան մասին լռութիւնը, մանաւանդ այդ սահմաններով Հայաստանը միջազգային կազմակերպութիւններին ներկայացնելը նշանակում է օրինականացնել ցեղասպանութիւնը:

Հայաստանը իրեն տնտեսական պատերազմ ազդարարած Թուրքիային պէտք է հակադարձի միջազգային իրաւունքի ընձեռած բոլոր հնարաւորութիւններով: Պէտք է հրաժարուել ձախողուած «Առանց նախապայմանների» ռազմավարութիւնից եւ ընդհակառակը՝ ընդգծել այն նախապայմանները, առանց որոնց ընդունման Թուրքիան չի կարող գործընկեր հարեւան պետութիւն համարուել:

Պէտք է շուտափոյթ կերպով Հայաստանի միջազգային իրաւական հնարաւորութիւններն ուսումնասիրող յանձնաժողով ստեղծել:

Միջազգային իրաւունքի եւ համապատասխան միջազգային կառոյցների օգնութեամբ պէտք է վերջ տալ հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների հակամարտութեանը: Հայաստանը պէտք է միջազգային հանրութեանը եւ Ադրբեջանին իրազեկի բանակցային գործընթացներից իր դուրս գալու մասին՝ բանակցութիւնները Արցախի ներկայացուցիչներին թողնելու նպատակով:

Արցախի անկախ պետութիւն ճանաչուելու՝ միջազգային իրաւունքի ենթակայ պետութիւն դառնալու կամ Հայաստանի Հանրապետութեան հետ միաւորուելու գործում Հայաստանի իշխանութիւններից պահանջւում է հետեւողական եւ իրապէս սկզբունքային դիրքորոշում: Ինքնորոշումն անբեկանելի սկզբունք է:

Արտաքին հարաբերութիւնների կողմնորոշիչներից կարեւորագոյնը

Հայաստանի պաշտոնապէս ազդարարած եւրոպական արժեքային համակարգին հաւատարմութիւնն է: Ըստ այդմ դէպի Եւրոպական Միութիւն ընթացքը կլինի Հայաստանի արտաքին քաղաքականութեան ռազմավարութեան հիմքերի հիմքը:

Դա սակայն չի կարող իրականացուել Ռուսաստանի եւ Պարսկաստանի հետ աւանդական հարաբերութիւնները սահմանափակելու կամ նուազեցնելու հաշուին: Մասնաւորապէս հայ - ռուսական հարաբերութիւնները պէտք է տեղափոխուեն բնականոն հարաբերութիւնների հարթութիւն.

Ա) Հայաստանի հետ դաշնակցային հարաբերութիւնների մէջ մտած Ռուսաստանը պիտի ընտրութիւն կատարի՝ մնալ Հայաստանի բարեկամ-դաշնակիցը եւ դադարել զենք ու զինամթերք վաճառել Արցախին պատերազմով սպառնացող Ադրբեջանին, թէ՝ դադարեցնել իր ռազմաքաղաքական ներկայութիւնը Հայաստանում:

Բ) Հայաստանը չի կարող անտեսել այն իրողութիւնը, որ աշխարհի տարբեր պետութիւններին մոտ 100 միլիարդ դոլլար զիջած Ռուսաստանը 100 մլն դոլլար անյայտ ծագման պարտքի դիմաց տիրացաւ Հայաստանի ունեցուածքի զգալի յատուածին: Կստեղծուի յատուկ հայ-ռուսական (կամ Համաշխարհային բանկի հովանաւորութեամբ գործող) յանձնաժողով՝ «գոյք պարտքի դիմաց» աննախադէպ գործարքը քննութեան առնելու նպատակով:

Գ) Հայաստանը պէտք է պահանջի Ռուսաստանից դադարեցնել իր պետական այրերի («Հայաստանը մեր ֆորպոստն է» արտայայտութիւնը) եւ ձեռնարկութիւնների («Հարաւկովկասեան երկաթուղի» անուանումը՝ «Հայաստանեան երկաթուղու» փոխարէն) ուղղակի եւ անուղղակի քամահարական վերաբերմունքը Հայաստանի եւ հայ ժողովրդի նկատմամբ: Մասնաւորապէս անթոյլատրելի է միջամտութիւնը տնտեսական, քաղաքական եւ ժողովրդագրական գործընթացներին՝ չարաշահելով Հայաստանի դժուարին կացութիւնը:

4. ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարդկութիւնը իր բազմաթիւ ընդհանրութիւններով յանդերձ բաղկացած է միմիանցից իրենց արժեքային համակարգերով առանձնացող ազգերից ու ժողովուրդներից: Ամեն ազգ համամարդկային ընտանիքում ներկայանում է իր ազգային արժեքային համակարգով: Դեռեւս 17 դար առաջ պետականօրէն քրիստոնէութիւնը որպէս պետական կրոն ընդունած հայ ժողովուրդը ընդհանուր առմամբ կատարել է իր ընտրութիւնը: Դարեր շարունակ ստիպուած լինելով մաքառել իր էութեան, իր արժեքային համակարգի հակառակորդների դէմ հայ ժողովուրդը պետականութեան վերականգնումից քսան մէկ տարի անց էլ կանգնած է անցեալից ժառանգած եւ այժմ ասպարէզ եկող ընդհանրական եւ մասնաւոր բացասական երեւոյթների դէմ պայքարելու հրամայականի առջեւ:

Տիեզերական անծայրածիր տարածքներից հայ ժողովրդին բաժին հասած՝ նրա ընդհանրական սեփականութիւն հանդիսացող Հայաստանի բնութիւնը եւ այդ բնութեան տէր հայ մարդը, Հայաստանի քաղաքացին ազգային բարձրագոյն արժեքն են:

Հայկական մշակոյթն իր ճիւղերով ու նրա հիմքերի հիմք հայոց լեզուն առաջնային արժեք են: Պետութեան առաջնահերթ խնդիրն է իր գիտակրթական համակարգի եւ յատուկ հաստատութիւնների միջոցով ապահովել հայ ժողովրդի մեծագոյն հարստութեան՝ հայոց լեզուի նկատմամբ գերակայ վերաբերմունքը: Մասնաւորապէս, պէտք է ուղիներ գտնել քաղաքացիներին նուազագոյն անհարմարաւէտութիւնների առաջ կանգնեցնելով՝

ա) դադարեցնել օտար լեզուների օգտագործումը հայկական՝ Հայաստանի քաղաքացիների ծառայելու կոչուած բոլոր, մանաւանդ՝ կրթական հաստատութիւններում,

բ) դպրոցներում, ինչպէս դա արուել է, անցեալում դասաւանդել գրաբար եւ արեւմտահայերեն,

գ) աշխատանքներ տանել հարիւրամեակներ հայ ժողովրդին ծառայած, նրա ազգային հոգեւոր միասնութեան առհաւատչեայ դասական ուղղագրութեան արմատաւորման ուղղութեամբ:

դ) աւելացնել Լեզուի տեսչության լիազորություններն ու իրավասությունները եւ այն դարձնել կառավարութեանը կից յատուկ ծառայութիւն:

Հայաստան պետութեան հանդէպ քաղաքացիների վստահութեան, քաղաքացիական ազատութիւնների նկատմամբ հաւատը խորացնելու նպատակով կատարուելիք գործնական քայլերի թւում առանձնակի կարեւորութիւն է ներկայացնում Մարտի 1-ի գործի լիարժեք քննութիւնը:

Ազգային անվտանգութիւն՝ բանակում մէկ երկու ամսուա ընթացքում ազգային անվտանգութեան եւ ռազմական ոստիկանութեան համատեղ ուժերով վերացնել դեդովշչինա երեւոյթը եւ քրեական մտածողութիւնը

Ազգային բանակում ծառայելու հնարաւորութիւն ընձեռել աղջիկներին նախ կամաւորութեան սկզբունքով՝ մինչեւ տաս ամիս ժամանակով, ապա

Մեզ կոչում են կովկասցիներ , հարավկովկասցիներ :

Ադրբեջանը իրեն համարում է 90 տարվա ազգ , իսկ մենք 20 :

Հայաստանի հիմներգի հարցը

Անթոյլատրելի համարել մանաւանդ կրթական համակարգում եւ պաշտոնատարների ելոյթներում Հայաստանի Հանրապետութեան սահմանադրօրէն նախատեսուած անուանը 3-րդ կամ այլ կցումնըերը

Խաղաղութիւն, ատելութեան քարոզը

Տոները որպէս ազգային փորձառութեան

Եթե տանտեր չես հեռանում ես : Հայ մարդը իր երկրում պետք է իրեն լավ զգա :

Արհեստականորեն խրախուսում են նրանց , ովքեր հայրենիքը լքել են :

Ինչ է նշանակում հզորություն , երբ ինքն է իր ճակատագիրը տնօրինում (Արժանապատիվ և հզոր) :

Ազգային անվտանգություն, Պաշտպանություն, Կրթություն, Առողջապահություն

Գործարար ոլորտում տիրում է մրցակցային անհավասար իրավիճակ :

Գիտություն . Պետք է օգտագործել համաշխարհային ձեռքբերումները, բայց մեր գիտական կարողականությունը չանտեսել : Գիտությունը նաև տեխնիկական հնարավորություններ է պահանջում :

Նորագոյն պատմութեան ճշմարտացի եւ ամբողջական մատուցում, օրինկա՝ ոչ մի ազգ չի ունեցել այնպիսի նախադեպ , որ տարբեր ազգերի ներկայացուցիչները մասնակցեն ազգային- ազատագրական պայքարին ԱՄԿ համակիր անդամները

Ռուսաստանի տարածաշրջանում ունեցած դրական եւ բացասական դերակատարութեան ճշմարտացի մատուցում:

Որպէս այդ ամենի արդիւնք կաւելանայ քաղաքացինեի հաւատը Հայաստան պետութեան հանդէպ եւ ոչ միայն կնվազի արտագաղթը այլեւ ներգաղթ կսկսուի, որը ժամանակի ընթացքում պէտք դառնայ պետական քաղաքականութիւն: